ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվար ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2018 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 6380.6 մլն դրամ՝ պլանավորված 5600.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 13.9 տոկոսով կամ 780.6 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 72.3 տոկոսով կամ 2677.1 մլն դրամով, որից 1825.4 մլն դրամ գումարը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկային եկամուտների աճով:

Փետրվար ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3405.2 մլն դրամ՝ պլանավորված 3000.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 13.5 տոկոսով կամ 405.2 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 60.2 տոկոսով կամ 1280.1 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 125 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 5 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 16 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են շուրջ 20.6 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 13 ստուգում՝ 20.5 մլն դրամ գումարով:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 87 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 59-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 6-ական՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման ու հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 5-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 11 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ավարտվել է 13 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 269.8 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 93 վարչական գործով սահմանվել է շուրջ 1.2 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6475 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5914:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 31 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 137 վարձու աշխատողի՝ 19.8 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 71 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի հրամանով սահմանվել է «Արցախի Հանրապետության տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար «Ե» սերիայի դրոշմապիտակի նմուշը և տեխնիկական պահանջները» ու «Արցախի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ալկոհոլային խմիչքի դրոշմավորման համար «2018» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշի նմուշը», որոնք ԱՀ կառավարության որոշմամբ 2018 թվականի փետրվարի 16-ից դրվել են կիրառության մեջ:

Եկամտային հարկի հաշվարկների ձևերը համապատասխանեցվել են 2018 թվականի հունվարի 1-ից «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքում կատարված փոփոխություններին:

Փետրվարի 2-ին կայացել է ֆինանսների նախարարության տարեկան հաշվետու ժողովը, որի ընթացքում ամփոփվել են ֆինանսների նախարարության 2017 թվականի կատարած աշխատանքներն ու նախանշվել 2018 թվականի անելիքները:

Փետրվարի 12-ին և 13-ին ֆինանսների նախարարը գործուղվել է Հայաստանի Հանրապետություն, որտեղ աշխատանքային հանդիպումներ է ունեցել ՀՀ ֆինանսների նախարար Վարդան Արամյանի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Վարդան Հարությունյանի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են անձնակազմի մասնագիտական վերապատրաստմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում փորձի փոխանակմանը վերաբերող հարցեր, ինչպես նաև պետական ֆինանսների կառավարման համակարգում ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնած բարեփոխումներն Արցախում տեղայնացնելու հնարավորությունները:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ամսվա ընթացքում իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2018 թվականի հունվարի 1-ից հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրական դրույթներում կատարված փոփոխությունները ճիշտ ընկալելու և գործնականում լիարժեք կիրառելու նպատակով հաշվետու ամսում շարունակվել են Հանրապետության շրջաններում գործող հարկ վճարողների հետ սեմինար-խորհրդակցությունները:

Հանրային իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով, այդ թվում՝ պարզաբանումներ տրամադրվել 2018 թվականի հունվարի 1-ից ներդրված «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարների վերաբերյալ:

Փետրվարի 3-ին ֆինանսների նախարարության ղեկավար անձնակազմը ներկա է գտնվել Մարտունու շրջանի հարկային տեսչության նոր շենքի բացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 355, ելքագրվել՝ 142 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 9 գրություն: